ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

16 հունվարի 2025 թվականի N 36-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(1-ին մաս)

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի բյուջետային գործընթացն սկսելու նպատակով՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մշակման գործընթացի՝ Հայաստանի Հանրապետության 2026-2028 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման իմաստով՝

1) բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ (այսուհետ՝ ԲԳԿ) են հանդիսանում «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող Հայաստանի Հանրապետության հանրային իշխանության և տարածքային կառավարման մարմինները.

2) բազային բյուջե է համարվում գոյություն ունեցող միջոցառումների գծով ծախսերը, որոնք ծախսային քաղաքականության անփոփոխ մնալու պայմաններում ճշգրտվել են ընթացիկ տարվան նախորդող բյուջետային տարվա փաստացի կատարողականով և/կամ հայտատուից անկախ ծախսային գործոնների ազդեցությամբ.

3) նոր նախաձեռնություններ են հանդիսանում՝

ա. միջոցառումների գծով ծախսերի ընդլայնումները, որոնք ծախսային քաղաքականության փոփոխության արդյունքում ենթադրում են շահառուների նոր շրջանակ,

բ. միջոցառումների գծով ծախսերը, որոնք ծախսային քաղաքականության փոփոխության արդյունքում ենթադրում են նոր ծառայությունների առաջարկներ:

3. Հայաստանի Հանրապետության հանրային իշխանության և տարածքային կառավարման մարմինների ղեկավարներին՝

1) սույն որոշման 1-ին կետով հաստատված ժամանակացույցում սահմանված ժամկետներում ապահովել 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի և 2026 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմումը և դրանք Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնելը՝ վերջինիս կողմից տրամադրված մեթոդական ցուցումներին համապատասխան.

2) սույն որոշման հավելվածով հաստատված ժամանակացույցի 20-րդ կետով նախատեսված՝ ՄԺԾԾ նախագծի մշակման աշխատանքների շրջանակներում, տվյալ ոլորտներում շահագրգիռ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ, բյուջետային հայտերի շուրջ քննարկումները կարող են կազմակերպել նաև առցանց ձևաչափով.

3) «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից հաստատվելուց հետո՝

ա. եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով հաստատված հատկացումների եռամսյակային բաշխվածությունը՝ համապատասխան հավելվածներով,

բ. հնգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել 2026 թվականի ընթացքում բյուջետային հատկացումների հաշվին պետության կարիքների համար իրականացվելիք գնումների պլանը.

4) Հայաստանի Հանրապետության 2026 թվականին շինարարական աշխատանքների գծով ծախսերի համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել սահմանված կարգով հաստատված և փորձաքննության դրական եզրակացություն ստացած նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ ներառյալ փորձաքննության դրական եզրակացությունը:

4 . Առաջարկել Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահին, Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի նախագահին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի նախագահին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, Հայաստանի

Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահին, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահին, Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահին, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին ղեկավարվել սույն որոշման 1-ին կետով հաստատված ժամանակացույցով:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Ն. Փաշինյան

2025 թ. հունվարի 16
Երևան

Հավելված
ՀՀ վարչապետի
2025 թվականի հունվարի 16-ի
N 36-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

NN ը/կ	Կատարողները	Կատարման ենթակա աշխատանքները և միջոցառումները	Փաստաթղթերն ստացող հանրային իշխանության մարմինները	Աշխատանքների և միջոցառումների կատարման սահմանային ժամկետները
1.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ 2026-2028 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ) ներառյալ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման շրջանակներում մեթոդական ցուցումների մշակում և ուղարկում՝		Մինչև 2025 թ. հունվարի 16-ը
		ա. պետական մարմինների ՄԺԾԾ (ներառյալ բյուջետային ֆինանսավորման) հայտերի կազմման և դրանց ներկայացման,	ԲԳԿ հանդիսացող մարմիններ (սույն ժամանակացույց-ցում՝ այսուհետ՝ հայտատու մարմիններ)	
		բ. ՄԺԾԾ նախագծի	Հայտատու	

		(ներառյալ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի) հիմքում դրվող բյուջետային եկամուտների առանձին եկամտատեսակների և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություն-ներից մուտքերի կանխատեսումների կազմման և դրանց ներկայացման	մարմիններ ՀՀ կենտրոնական բանկ	
2.	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Ընկերություն-ների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում նշված ընկերությունների (այդ թվում՝ Կառավարության 2021 թ. հուլիսի 15-ի N 1149-Ն որոշմամբ սահմանված չափանիշներին համապատասխանող այլ ընկերու-թյունների) կողմից 2022-2024 թթ. արդյունքներով բնապահպանական հարկի՝ նույն հոդվածի համաձայն սահմանված գումարների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարություն ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	մինչև 2025 թ. հունվարի 27-ը
3.	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	«Ընկերություն-ների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարություն ՀՀ մարզպետների	մինչև 2025 թ. հունվարի 31-ը

		Նշված ընկերություններից յուրաքանչյուրի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկի ներկայացում (այն դեպքում, երբ ընկերության գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների թիվը մեկից ավելի է, նաև ընկերության կողմից վճարվող բնապահպանական հարկի գումարի՝ այդ համայնքների միջև բաշխման համամասնություն-ները և դրանց հաշվարկման սկզբունքները)	աշխատակազմեր	
4.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ վարչապետի մոտ քննարկումների անցկացման նպատակով 2026-2028 թվականների ՄԺԾԾ հիմնական ցուցանիշների ուղենիշային մեծությունների գնահատականների ներկայացում (ըստ անհրաժեշտության)	ՀՀ վարչապետի աշխատակազմ	մինչև 2025 թ. փետրվարի 3-ը
5.	ՀՀ վարչապետի աշխատակազմ	2026-2028 թվականների ՄԺԾԾ հիմնական ցուցանիշների ուղենիշային մեծությունների գնահատականների վերաբերյալ քննարկումների իրականացում, դրա հիման վրա	ՀՀ ֆինանսների նախարարություն Հայտատու մարմիններ	մինչև 2025 թ. փետրվարի 7-ը

		ոլորտային ԲԳԿ-ների մասով ծախսային նախնական չափաքանակների վերաբերյալ առաջարկու-թյունների ներկայացում (ըստ անհրաժեշտության)		
6.	ՀՀ ֆինանսների նախարարություն	2026-2028 թվականների ՄԺԾԾ հիմնական ցուցանիշների ուղենիշային մեծությունների գնահատականների, ոլորտային ԲԳԿ-ների մասով ծախսային նախնական չափաքանակների վերաբերյալ քննարկումների արդյունքներով հայտատու մարմիններին 2026-2028 թվականների ծախսային նախնական կողմնորոշիչ չափաքանակների տրամադրում (ըստ անհրաժեշտության)	Հայտատու մարմիններ	Մինչև 2025 թ. փետրվարի 13-ը
7.	Հայտատու մարմիններ	Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության սահմանած ժամանակացույցի՝ հայտատու մարմինների հետ իրենց բյուջետային ծրագրերի ռազմավարական փաստաթղթերի հետ համապատասխանու-թյան, սահմանված նպատակներին հասնելու առաջընթացի, ծրագրերի բովանդակության		Մինչև 2025 թ. փետրվարի 14-ը

		և կառուցվածքի, դրանց արդյունքային ցուցանիշների, ինչպես նաև դրանց ֆինանսավորման շարունակականու-թյան նպատակա-հարմարության հետ կապված հարցերի շուրջ ՀՀ ֆինանսների նախարարությու-նում քննարկում-ների անցկացում		
8.	Հայտատու մարմիններ	ՄժԾԾ նախագծի մշակման աշխատանքների շրջանակներում ոլորտային քաղաքականության հարցերի շուրջ քննարկումների անցկացում իրենց իրավասության ներքո գտնվող ոլորտներում ծրագրերի միջոցառումները կատարող՝ ԲԳԿ չհանդիսացող պետական մարմինների հետ (այսուհետ՝ կատարող մարմիններ)		Մինչև 2025 թ. փետրվարի 20-ը (ըստ ԲԳԿ հանդիսացող պետական մարմինների սահմանած ժամանակա-ցույցի)
9.	ՀՀ ֆինանսների նախարարություն	Համայնքների 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերի նախագծերի և 2026 թվականի բյուջեների նախագծերի մշակման մեթոդական ցուցումների մշակում և ուղարկում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարության միջոցով՝ տեղական ինքնակառավարման մարմիններ	Մինչև 2025 թ. փետրվարի 24-ը
10.	Հայտատու	ՄժԾԾ նախագծի	ՀՀ ֆինանսների	Մինչև 2025 թ.

	Մարմիններ (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մասով, ընդ որում՝ ՀՀ տարածքային կառավարման մարմինները՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համաձայնեցված), ՀՀ կենտրոնական բանկ	հիմքում դրվող բյուջետային մուտքերի, այդ թվում՝ բյուջետային եկամուտների առանձին եկամտատեսակներից և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություն-ներից մուտքերի կանխատեսումների ներկայացում	Նախարարություն	փետրվարի 26-ը
11.	Հայտատու մարմիններ	Օտարերկրյա պետությունների ու միջազգային ֆինանսական կազմակերպու-թյունների և այլ անձանց կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված դրամաշնորհների՝ իրենց համակարգում 2026-2028 թվականներին օգտագործման մասին կանխատեսումների կազմում և ներկայացում	ՀՀ ֆինանսների Նախարարություն	մինչև 2025 թ. փետրվարի 26-ը
12.	Հայտատու մարմիններ, ՀՀ կենտրոնական բանկ	ՄԺԾԾ նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման նպատակով՝ իրենց ոլորտի հիմնական ցուցանիշների վերաբերյալ կանխատեսումների ներկայացում	ՀՀ ֆինանսների Նախարարություն	մինչև 2025 թ. փետրվարի 28-ը
13.	Հայտատու մարմիններ	Առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված	ՀՀ ֆինանսների Նախարարություն	1) մինչև 2025թ. մարտի 3-ը (բազային բյուջեի մասով) 2) մինչև

		մեթոդական ցուցումներով՝ մշակել և ներկայացնել իրենց 2026-2028 թվականների ՄԺԾԾ հայտերը: Հայտերում ծախսային առաջարկները ներկայացվում են ըստ հետևյալ ուղղությունների՝ 1) գոյություն ունեցող միջոցառումների գծով ծախսերը ծախսային քաղաքականության անփոփոխ մնալու պայմաններում՝ ճշգրտված նախորդ բյուջետային տարվա փաստացի կատարողականով և հայտատուից անկախ ծախսային գործոնների ազդեցությամբ (բազային բյուջե). 2) նոր նախաձեռնությունները: Հայտերում ծախսերի գծով առաջարկությունները ներկայացվում են ինչպես ամփոփ՝ ըստ ԲԳԿ-ի, այնպես էլ բացված՝ ըստ տվյալ ոլորտում ծրագրերի միջոցառումներն իրականացնող՝ ԲԳԿ չհանդիսացող կատարող մարմինների)		2025թ. մարտի 10-ը (ընդլայնումների և նոր նախաձեռնությունների մասով)
14.	ՀՀ հանրային իշխանության և տարածքային կառավարման մարմիններ՝ ըստ ՀՀ ֆինանսների	Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված ցանկի՝ ՄԺԾԾ	ՀՀ ֆինանսների նախարարություն	ըստ ՀՀ ֆինանսների նախարարության հարցումներում նշված պարբերականության

	Նախարարության ներկայացրած հարցումների	մշակման համար լրացուցիչ տեղեկատվության տրամադրում		(ժամկետների)
15.	Հայտատու մարմիններ	Սույն ժամանակացույցի 13-րդ կետի համաձայն հայտատու մարմինների կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված՝ 2026-2028 թթ. ՄԺԾԾ հայտի և ըստ անհրաժեշտության այլ պարզաբանող նյութերի հրապարակում հայտատու մարմինների ինտերնետային կայքերում		մինչև 2025 թ. մարտի 10-ը, փոփոխություններ պարբերաբար թարմացմամբ
16.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՄԺԾԾ նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների և հարկաբյուջետային շրջանակների մշակում (քննարկելով ՀՀ կենտրոնական բանկի հետ) և ներկայացում	ՀՀ կենտրոնական բանկ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ պետական եկամուտների կոմիտե	մինչև 2025 թ. մարտի 28-ը
17.	ՀՀ ֆինանսների նախարարություն	«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան համայնքների 2026-2028 թվականների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	մինչև 2025 թ. ապրիլի 1-ը

		պետական բյուջեից հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարի նախնական չափերի հաշվարկում և ներկայացում		
18.	ՀՀ ոստիկանություն ՀՀ համայնքներ Այլ մարմիններ (ըստ անհրաժեշտության)	ՀՀ համայնքների բյուջեներին ՀՀ 2026-2028 թվականների պետական բյուջեից տրամադրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների (ըստ անհրաժեշտության նաև համայնքների եկամուտների կորուստների փոխհատուցման) գումարների հաշվարկման մեջ օգտագործվող՝ համայնքներին վերաբերող ելակետային տվյալների տրամադրում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարության սահմանած ժամկետներում
19.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարություն	ՀՀ 2026 թվականի պետական բյուջեից ՀՀ համայնքների բյուջեներին տրամադրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների (ըստ անհրաժեշտության նաև համայնքների եկամուտների կորուստների փոխհատուցման) հաշվարկներում օգտագործման համար ստացված՝ պետական մարմինների կողմից հաշվառվող ելակետային տվյալների մասին տեղական ինքնակառավարման մարմիններ	ՀՀ մարզպետների աշխատակազմեր (տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրելու համար)	Նշված տվյալներն ամբողջական ձևով ստանալու օրվանից 10-օրյա ժամկետում

		ծանուցումների ուղարկում		
20.	Հայտատու մարմիններ	Մժթթ նախագծի մշակման աշխատանքների շրջանակներում բյուջետային հայտերի շուրջ քննարկումների անցկացում իրենց իրավասության ներքո գտնվող ոլորտներում շահագրգիռ քաղաքացիական հասարակության կազմակերպու-թյունների հետ, քննարկումների արդյունքների վերաբերյալ (ներառյալ ներկայացված դիտողությունները և առաջարկու-թյուններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ ամփոփաթերթ) տեղեկատվության հրապարակում հայտատու մարմինների ինտերնետային կայքերում և ներկայացում ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2025 թ. ապրիլի 10-ը
21.	ՀՀ ֆինանսների նախարարություն	Մժթթ նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների, հարկաբյուջե-տային շրջանակների վերաբերյալ առաջարկու-թյունների ներկայացում և համաձայնեցում	ՀՀ վարչապետի աշխատակազմ	մինչև 2025 թ. ապրիլի 10-ը
22.	Հայտատու մարմիններ, ՀՀ	Հայտատու մարմինների		մինչև 2025 թ. մայիսի 6-ը

	ֆինանսների նախարարություն	կողմից ներկայացված ՄԺԾԾ հայտերի շուրջ ՀՀ վարչապետի մոտ քննարկումների անցկացում (ըստ անհրաժեշտության)		
23.	Հայտատու մարմիններ	ՀՀ վարչապետի մոտ ժամանակացույցի 22-րդ կետով նախատեսված քննարկման արդյունքներով ավարտուն տեսքի բերված՝ ՄԺԾԾ հայտերի մշակում և ներկայացում (ներառյալ տարածքային կտրվածքով՝ առանձնացված ըստ Երևան քաղաքի և առանձին մարզերի)	ՀՀ ֆինանսների նախարարություն	յուրաքանչյուր քննարկումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում
24.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՄԺԾԾ նախագծի վերջնական տարբերակի կազմում և ներկայացում	ՀՀ վարչապետի աշխատակազմ	մինչև 2025 թ. մայիսի 26-ը
25.	ՀՀ կառավարու-թյուն	ՄԺԾԾ նախագծի քննարկում և հաստատում		մինչև 2025 թ. մայիսի 29-ը
26.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարություն	2026-2028 թվականների համար ըստ առանձին համայնքների տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների նախնական գումարների հաշվարկում և հրապարակում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարության ինտերնետային կայքում		մինչև 2025 թ. մայիսի 30-ը
27.	ՀՀ վարչապետի	ՀՀ կառավարության	ՀՀ Ազգային ժողով	մինչև 2025 թ.

	աշխատակազմ	կողմից հաստատված ՄժԾԾ ներկայացում ՀՀ Ազգային ժողով՝ ի գիտություն		հունիսի 3-ը
28.	Հայտատու մարմիններ, ՀՀ ֆինանսների նախարարություն	ՄժԾԾ հիմքում դրված ծախսային հաշվարկ-հիմնավորումների և ըստ անհրաժեշտության այլ պարզաբանող նյութերի հրապարակում հայտատու մարմինների ինտերնետային կայքերում		մինչև 2025 թ. հունիսի 5-ը
29.	«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի գործողության շրջանակներում ընդգրկված համայնքների ղեկավարներ՝ ՀՀ տարածքային կառավարման մարմինների միջոցով	»Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն ՀՀ համապատասխան համայնքների կողմից ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության հետ համաձայնեցված և համայնքի ավագանու կողմից հաստատված բնապահպանական ծրագրերը և դրանց գծով ՀՀ 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու մասին հայտերը ներկայացնելը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	մինչև 2025 թ. օգոստոսի 1-ը
30.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների	Պետական իշխանության մարմինների տիրապետմանը և	ՀՀ կադաստրի կոմիտե	մինչև 2025 թ. օգոստոսի 4-ը

	Նախարարության	օգտագործմանը		
	պետական գույքի	հանձնված		
	կառավարման	(ամրացված)		
	կոմիտե	գույքի		
		շուկայական		
		արժեքին		
		մոտարկված		
		կադաստրային		
		արժեքն ստանալու		
		նպատակով պետական		
		գույքի հաշվառման		
		համակարգից		
		պետական		
		իշխանության		
		մարմինների		
		վարչական շենքերի		
		վերաբերյալ		
		անհրաժեշտ		
		ամբողջական		
		տեղեկատվության		
		տրամադրում		

ԻՐՏԵԿ - շարունակությունը հաջորդ մասում